



19(521)

31.07.2018

Յրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՆՈՐ ԸՋՈՐ ՈՒԺ «ԱՐՑԱԽԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

Հուլիսի 21-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում հանդիսավոր պայմաններում ազդարարվեց նոր կառույցի՝ «Արցախի մարզիկների միություն» (ԱՄՄ) հասարակական կազմակերպության հիմնադրումը: Ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, պետական այրեր, մարզախարհի ներկայացուցիչներ՝ աշխարհի, Եվրոպայի չեմպիոններ, վետերաններ, մրցությունների հաղթողներ:

Թե ինչ գործառնություններ է խրականացնելու մարզական նոր կառույցը, ներկայացրեց նրա նախագահ, աշխարհի կրկնակի չեմպիոն, Եվրոպայի չեմպիոն, սպորտի վաստակավոր մարզիչ Աշոտ Դանիելյանը:

Դարեր ի վեր՝ նախնադարից մինչև այսօր հասարակությունների հետևյալ կարևորագույն բնագավառները արտադրություն, ռազմարվեստ, ֆիզկուլտուրա ու սպորտ, շարունակական վերելք են ապրել՝ շաղկապված լինելով իրար հետ: Դրանք լուրջ են օգնել են միմյանց՝ հասնելու հաջողությունների, ձեռք բերելու նվաճումներ: Ի սկզբանե ժողովուրդները, պետություններն ու նրանց ռազմական կառույցները միշտ էլ մարզիկների կարիք են ունեցել: Հին Հունաստանում աստվածացնում էին օլիմպիական չեմպիոններին, նրանց պատվին անմիջապես հուշարձաններ կանգնեցնում: Ժողովուրդը մարզիկների, հատկապես օլիմպիական չեմպիոնների մեջ տեսնում էր իր ուժը՝ հարվածող բռնուցքը: Առավել աչքի ընկած մարզիկների պատվին նա երգեր, ծներ էր հյուսում, իսկ լավագույնների դարձնում էր հերոսներ: Փառապանծ հռոմեական կոհորտաների հրամանատարներ նշանակելիս հաշվի էին առնվում նաև նրանց մարզական ձեռքբերումները: Տոտալիտար ռեժիմ ունեցող երկրներում նույնպես հարգի էին սպորտն ու ֆիզկուլտուրան: Ամեն ինչ արվում էր դրանց մասսայականացման համար: Սովորաբար ուժային կառույցների ղեկավարներ, որևէ բաժնի, օղակի պետեր ու հրամանատարներ էին նշանակվում մարզիկների: Խորհրդային երկրում որոշ ռազմական ուսումնարաններ ընդունվող դիմորդներից անհրաժեշտաբար պահանջվում էր սպորտի մեկ կամ մի քանի տեսակից 1-ին կամ 2-րդ կարգ:

Բոլոր ժամանակներում սպորտի կարևորության մասին այսպիսի նախաբանով սկսեց իր ելույթը ԱՄՄ նախագահը: Անդրադարձնելով նորաստեղծ միության նպատակներին՝ Ա. Դանիելյանն ասաց, որ, համագործակցելով ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության, մարզական, ստեղծագործական, հունանիտար, բարեգործական և այլ կազմակերպությունների, մարզական և հասարակական գործիչների հետ, ԱՄՄ-ն առավելագույնս նպաստելու է մեր հանրակրթությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Դրանց զարգացմամբ զբաղվող բազմաբաղկերիչ և կազմակերպություններին օժանդակելը, մարզիկների, մարզիչների և մրցավարների իրավունքների պաշտպանությունը միության գլխավոր նպատակներից են: Կազմակերպության գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվելու վետերան մարզիկների սոցիալական պաշտպանությանը, առողջ ապրելակերպի և օլիմպիական իդեալների քարոզչությանը: «Արցախի մարզիկների միություն» ՀՀ-ն միավորում է մարզիկներին, հնարավորություն է տալիս վետերաններին փոխանցել իրենց փորձն ու գիտելիքները, ակտիվ մասնակցություն ունենալ երկրի հասարակական կյանքին:

ԱՄՄ նախագահը ներկայացրեց վերջին յոթ տարում մարզական Արցախի հաջողությունները: Մեր մարզիկները 150 անգամ մրցանակային տեղեր են զբաղվել աշխարհի, Եվրոպայի առաջնություններում: 7 հոգի դարձել է աշխարհի, 14-ը՝ Եվրոպայի, 331 անգամ տարբեր մարզաձևերից՝ ՀՀ չեմպիոն: Ունեցանք նաև շախմատի գծով միջազգային կարգի 2

գրոսմայստեր: Մեր պետությունը բարձր է գնահատել Արցախի մարզիկների, մարզիչների համառ ու տքնաջան աշխատանքը, վաստակը: Պարգևատրվողների թվաճը դարձյալ արտացոլում է մարզական հաջողությունների շարժմանը: Այսպես, ԱՀ կառավարության կողմից պարգևատրվել են. 2011 թվականին՝ 22 հոգի, 2102թ.՝ 78, 2013-ին՝ 81, 2014-ին՝ 87, 2015-ին՝ 132, 2016-ին՝ 94, 2017-ին՝ 126 հոգի, ընդհանուր առմամբ՝ 210 մարզիկ՝ 590 անգամ:

ԱՀ պատվավոր կոչումների են արժանացել. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ՝ 9, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատողի՝ 10, վաստակավոր մարզիչ՝ 9 հոգի:



Թվերի հետևում մարզիչների տքնաջան աշխատանքն է, մարզիկների կամքն ու տոկունությունը և, իհարկե, պետական աջակցությունը, ինչի շնորհիվ ամեն տարի և տարին մի քանի անգամ Ստեփանակերտի մատույցներում հանդիսավորապես դիմավորում ենք մեր չեմպիոններին:

Սպորտն օգնում է նաև լուծել սոցիալական խնդիրներ: Մարզիկների շնորհիվ հնարավոր է օգնել հասարակությանը՝ լուծելու բազմաթիվ հարցեր, իրագործելու անհավանական թվացող ծրագրեր: Սպորտը մեծ ուժ է: Այն օգնում է լայնքուն ինքնադրսևորվել, այս կամ այն հարցի վերաբերյալ ունենալ հստակ դիրքորոշում, ճիշտ որոշումներ կայացնել: Մարդուն հաղորդում է լրջություն, կենսախնդրություն, լավատեսություն: Մարզիկները սովորաբար լինում են անընկճելի, համառ, աշխատասեր, պայքարող և մարտնչող: Սպորտով և ֆիզկուլտուրայով զբաղվող մարդիկ երբեք ծուլյ և անբան չեն լինում: Նրանք գործիմաց են, դիմացկուն, տոկուն, ժիր, ժրաջան, հպարտ, հեշտությամբ կարողանում են հաղթահարել տարաբնույթ ռիսկները: Մարզիչներն ու խոշորագույնները, ունեն անկտրում կամք և ամուր ոգի: Սպորտով և ֆիզկուլտուրայով զբաղվող մարդիկ սիրում են կյանքն ու աշխատանքը: Սպորտը մարդկանց ներարկում է կարգապահություն, նպատակասլացություն, սպորտի շնորհիվ մարդու մեջ ձևավորված մի քանի դրական որակներ թվարկեց ԱՄՄ նախագահը:

Արցախի սպորտային կառույցն իրենից մեծ ուժ է ներկայացնում: Արցախում այժմ գործում են 24 մարզական ֆեդերացիա, Ստեփանակերտ քաղաքում և շրջակայքում գործում է 11 մանկապատանեկան դպրոց, որտեղ 20 մարզաձևից առկա է 267 մարզիչներ՝ շուրջ 5000 պարապողներով: Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվում է ավելի քան 15 հազար մարդ:

ԱՄՄ նախագահը ձեռքբերումների կողքին նշեց նաև անելիքները: Ապրում ենք անկայուն ու պայթյունավտանգ տարածաշրջանում, և խնդիր է դրված կարճ ժամանակում յուրաքանչյուր քաղաք, գյուղ, բնակավայր, փողոց դարձնել անխոցելի, անխորտակելի ամրոց, ինչպես Հին Սպարտայում՝ անպարտելի ամրոց պետք է դարձնել յուրաքանչյուր քաղաքացու: Ուստի երկսեռ ամբողջ բնակչությունը՝ մեծից փոքր, պետք է մշտապես, սիստեմատիկաբար զբաղվի սպորտով և ֆիզկուլ-

տուրայով, յուրաքանչյուր հայ պետք է ֆիզիկապես առողջ, ամուր և պատրաստ լինի ցանկացած պահի զենք վերցնել և հակահարված տալ թշնամուն:

Մեր պետության առջև ծառայած կարևորագույն հարցերից է տնտեսական բնագավառում նույնպես զրանցել հաջողություններ, և այստեղ ևս հարկ է ունենալ առողջ ու կոփված քաղաքացիներ: Միության նախագահը թվարկեց նաև հրատապ լուծում պահանջող խնդիրները, որոնց լուծման դեպքում կունենանք ավելի մեծ հաջողություններ: Այսպես, դեռևս թույլ է մարզանյութական բազան, այն չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Բնակչությանն ու երեսններին չեն բավարարում խաղահրապարակներն ու մարզադաշտերը: Ակտիվ սպորտը թողնելուց հետո մարզիկների մի մասը չի կարողանում ինտեգրվել հասարակությանը: Նրանց հարուստ փորձը, ինչպես հարկն է, չի օգտագործվում, չի փոխանցվում մատաղ սերունդին, պատանիներին ու երիտասարդությանը: Նրանք կարիք ունեն ավելի մեծ ուշադրության: Լինում են դեպքեր, երբ ֆինանսների սղության պատճառով հնարավոր չի լինում մարզիկներին ուղարկել մրցումներին: Մարզիկների և վետերան մարզիկների մի մասը սոցիալ-կենցաղային անմխիթար վիճակում է: Նմանատիպ խնդիրների լուծման համար խիստ անհրաժեշտ է պաշտոնական սպորտային կառույցին զուգահեռ ունենալ հասարակական կազմակերպություն, որում կարող են ընդգրկվել բոլոր ցանկացողները:

Սպորտի ոլորտում բարեգործական գործունեությունը իրականացնելը, ֆիզիկական



կուլտուրայի և սպորտի զարգացմամբ զբաղվող քաղաքացիներին ու կազմակերպություններին օժանդակելը, մարզիկների, մարզիչների և մրցավարների իրավունքների պաշտպանությունը միության գլխավոր նպատակներից են:

Սպորտի դերը մեծ է նաև երկրի ճանաչման առումով: Դիվանագետներից ոչ պակաս լավ այսօր Արցախն աշխարհին ներկայացնում են մեր մարզիկները. հանդես գալով հայկական եռագույնի ներքո՝ նրանք փաստացի ներկայացնում են և Հայաստանի Հանրապետությունը, և Արցախը:

ԱՄՄ-ի ստեղծումը ողջունեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, որի զննատմամբ՝ նախաձեռնության հիմքում ձեռքբերումներն ու հաղթանակներն ամրագրելու և շարունակական դարձնելու, արցախյան մարզական միասնական ընտանիքի գաղափարն է: Նա վստահ է, որ միությունն իր շուրջը կհամախմբի ոչ միայն մեր մարզիկներին ու մարզիչներին, այլև բոլոր նրանց, ովքեր քաջ գիտակցում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման ու զարգացման կարևորությունը, պատրաստակամ են իրենց մասնակցությունը բերել այդ նպատակի իրականացմանը: Նախարարի համոզմամբ՝ Արցախի մարզիկների միությունը կարող է դառնալ մեր հավաքական ուժի դրսևորումներից մեկը:

«Այն, ինչ կատարվեց մեր երկրում վերջին

տարիներին և կատարվում է այսօր մեր երկրի նախագահի բարձր հովանու ներքո սպորտի մասսայականացման և զարգացման ուղղությամբ՝ նոր մարզակառույցների, մարզադաշտերի, մարզադահլիճների, դպրոցների, հրապարակների կառուցումն ու հիմնանորոգումը, տարբեր մարզաձևերի զարգացմանն ուղղված քայլերը, հաջողությունների հասած մարզիկներին ու մարզիչներին խրախուսելու աննախադեպ որոշումները, սեփական ներուժի բացահայտման և զարգացման հնարավորություն են ընձեռել հազարավոր երեխաներին: Դրա լավագույն վկայությունը ամեն տարի աշխարհի ամենատարբեր հարթակներում մեր մարզիկների և մարզիչների աճանագրած հաջողություններն են, որոնք, անկասկած, նաև ճանաչում են բերում մեր երկրին, խոսում մեր կենսակերպի, մեր դավանած արժեքների, մեր ձգտումների ու նպատակների մասին: Ամեն անգամ մեր եռագույնը ծածանելով աշխարհի տարբեր երկրների պատվի հարթակներին՝ մեր մարզիկներն իրենց հաղթանակներով փառաբանում են մեր պետականությունը և դառնում այդ պետականության արժանապատվության պահպաններն ու պաշտպանները: Սա և ծառայություն է հայրենիքին»,- ասաց Ն. Աղաբալյանը՝ նկատելով, որ այդ ձեռքբերումները, ստեղծված հիմքն ավելի տեսանելի են դարձնում ապագայի բարձունքները: «Մեր ներուժը շատ ավելի մեծ է, մեր սպասելիքներն ապագա հաղթանակների առումով համարժեք են մեր ներուժին: Կատախ են՝ ԱՄՄ-ն մեր խթան կհանդիսանա մեր նվաճումները բազմապատկելու, նաև օլիմպիական հաղթանակների ձգտելու և հասնելու համար»,- ասաց նա:

Նախարարը փաստեց, որ ընթացիկ տարում մեր մարզիկները նոր նվաճումներ ու հաղթանակներ են արձանագրել: Ամեն տարվա պես տարեվերջին ոլորտի ձեռքբերումները, հանրագումարի բերվելով, կներկայացվեն հանրապետության նախագահի զննատմամբ: Իսկ այս օրերին հպարտանալու հերթական առիթը տված՝ հուլիսի 9-16-ը Բրազիլիայում անցկացված ուշուկի պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնությունում, որին մասնակցեցին 45 պետության 400-ից ավելի մարզիկներ, արցախցի մարզիկներ Արսեն Բաղդասյանը, որը 48 կգ քաշային կարգում նվաճեց «Աշխարհի չեմպիոն» տիտղոսը, և Վարդան Աբրահամյանին՝ 65 կգ քաշային կարգում բրոնզե մեդալակրին, նրանց մարզիչ Դավիթ Գրիգորյանին, բեմ հրավիրելով՝ Ն. Աղաբալյանը ևս ամեն անգամ շնորհավորեց, շնորհակալություն հայտնեց և հանձնեց նվերներ:

Մարզիչ Դավիթ Գրիգորյանն իր ուրախությունը հայտնեց մարզական նոր կառույցի ստեղծման կապակցությամբ՝ նկատելով, որ այն կդառնա կարևորագույն հարթակ առողջ և արդյունավետ քննարկումների համար: «Միությունը կդառնա այն խթանիչ ամբիոններից մեկը, որը մեզ կանցի դեպի ավելի զարգացած ու զորացած պետություն, որում սպորտն է առողջ ու կոփված սերունդը»,- ասաց նա:

ԱՄՄ-ի ստեղծումը ողջունեց նաև նրանք, ովքեր մեծ ավանդ ունեն հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ու տարածման, մեր մարզիկների կրթության ու դաստիարակության գործում: Այդ կապակցությամբ ելույթ ունեցավ վաստակաշատ մարզիկ Վազիֆ Իշխանյանը՝ կոչ անելով վետերան և գործող մարզիկներին՝ միավորվել նորաստեղծ կազմակերպության շուրջը, իրենց ուրույն դերակատարությունն ունենալ Արցախ աշխարհում բոլոր մարզաձևերի քարտուս, նրանց թարմության և մասսայականացման գործում:

Մարզական միության ստեղծումը գեղարվեստական ելույթներով ողջունեցին մայրաքաղաքի մշակույթի օջախների ներկայացուցիչները:

Ս. ԽԱԶՍՐՅԱՆ

ՈՒՍՊԸ

Գրանցված է՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2018 թվականի հուլիսի 26-ին: Պետական քրանցման համարը՝ 1051852 Արցախի Հանրապետության արդարադատության նախարար Ա. Դանիելյան

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«26» հուլիսի 2018թ.

ք. Ստեփանակերտ

N 225 -Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ՀՐԱՍՏՅՈՒՄ ԵՄ:

- 1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնին՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:
3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:
4. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ն. ԱՐԱՔԱԼՅԱՆ

Հավելված Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2018 թվականի 225-Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

I. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ 7-րդ և 8-րդ աղյուսակների, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ):

1. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:

2. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

- 1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար:
2) բազմաձևակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում:
3) Նախարարության կողմից երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

- 1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում:
2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:
3. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2018թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2019թ. մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 25-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:
5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՌՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:

8. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

11. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

13. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ: աշնանային՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռային՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 6-ը ներառյալ, գարնանային՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

14. Առաջին դասարանիցների աշնանային արձակուրդները տրվում են 2018 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 20-ը ներառյալ, գարնանայինը՝ 2019 թվականի մարտի 18-31-ը ներառյալ:

15. Երկրորդ դասարանիցների աշնանային արձակուրդները տրվում են 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 20-ը ներառյալ և գարնանայինը՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

րառյալ և գարնանայինը՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

16. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնությամբ դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազն հինգ աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

17. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

18. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

ՈՒՍՈՒՄՆԵՐ

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

19. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախաիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի, ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր համարակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով:

3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

4) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

5) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ էլեկտրոնային Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությանը ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկն ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

20. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանի առաջին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը:

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է

12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ), բացառությամբ «Նախնական գիմնոզիական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների:

3) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական գիմնոզիական 7 պատրաստություն» (ՆՁՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ:

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը:

5) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությամբ:

6) «Նախնական գիմնոզիական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունը (կրկնությունը) ավարտվում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) պետական ավարտական քննությամբ:

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողներ ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում, մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները:

8) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկաներ (դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային (ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը:

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը:

10) Մեկից ավելի դասարանների առարկայական դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Կիսամյակային և տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան:

11) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը սույն կետի 5-րդ ենթակետի պահանջներին համապատասխան կազմակերպվում է դասարանային (դասացուցակից համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով:

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին:

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից:

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ:

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի (ներին) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում համապատասխան մատյանում:

16) Արտադասարանային ինքնուրույն ու-

սումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն:

17) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

21. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) և 11-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում է մեկական ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից: 10-րդ դասարանում հատկացվում է շաբաթական 2 ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից:

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության լիազորմամբի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

22. Հանրակրթական դպրոցի դասարանը կազմավորվում է տվյալ դասարան փոխադրված և ընդունված սովորողների ընդհանուր թվի միջին թվաքանակի հաշվարկով: Տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 25-30, իսկ ավագ դպրոցում՝ 20-25 սովորող: Դասարանում սովորողների առավելագույն թիվը տարրական և միջին դպրոցում չի կարող գերազանցել 35-ը, ավագ դպրոցում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

23. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու» և «Օտար լեզու», միջին դպրոցում և ավագ դասարաններում՝ «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առարկայական դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 30 (20) և ավելի է:

24. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

25. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարա-

նը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 (անկախ սովորողների թվից) և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

26. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

27. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

28. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Զինիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ էլեկտրոնային յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կայքում (<http://www.aniedu.am/>), Կրթության ազգային ինստիտուտի կրթական ալիքից (<https://www.youtube.com/user/Ruzaniko>), <http://informatika.am/> կայքից և «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարան»-ում (<http://lib.armedu.am>) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

29. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը Հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում՝ ապահովելով սույն հավելվածով սահմանված՝ տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

30. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

31. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամներին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:



ՈՒՍՊԵՏՈՒԹՅԱՆ

3 IV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2018 - 2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱՐԱՆՈՒՄՆԵՐ

32. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) Ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

33. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական - հումանիտար, բնագիտա-մաթեմատիկական, արհեստագործական.

2) ընդհանուր:

34. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Ուսումնական պլաններն ըստ հոսքերի տրված են.

1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 1-ի).

2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 2-ի).

3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 3-ի).

4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 4-ի):

35. Ուսումնական պարապմունքներն Ավագ դպրոցում սկսվում են 2018թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվում 2019թ. մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 25-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ Ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար:

36. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշիչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

37. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման սանդղակները բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

38. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

39. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ուսումնասիրությունը սույն հավելվածի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին համապատասխան ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում:

40. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռային՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 6-ը ներառյալ, գարնանային՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

41. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կա-

րող է սահմանվել 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ:

42. Ավագ դպրոցի Ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

43. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողներն ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

44. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացն իրականացվում Հավելվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան:

45. Ուսումնական պլանների կառուցվածքը.

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից:

1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար.

2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը.

3) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկաներ(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում.

4) Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով.

5) Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին.

6) Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից.

7) 10-11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

46. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին.

2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանասիրություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ծարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո.

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

47. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ.

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին.

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը.

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին.

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

48. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու.

2) Հաստատության ընտրությամբ երրորդ

(հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում.

3) Ավագ դպրոցը դասավանդող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մասնավորապես խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում.

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

49. Սույն հավելվածի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հավելվածի Աղյուսակ 2-ում՝ ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորող չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները:

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորող չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները:

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի) 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0,5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի):

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան:

6) Սույն հավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկաներ ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը):

ՈՒՍՊԼԱՆ

Աղյուսակ 1

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԼԱՆ

Table with 13 columns: Ուսումնական առարկաներ, Հաբաթական ժամերի քանակ (I-XII), and rows for various subjects like Մայրենի, Հայոց լեզու, Գրականություն, etc.

Աղյուսակ 2

ԱՎԱԳ ԴԴՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԼԱՆ

X-XII դասարաններ

Table with 4 columns: Առարկայախումբ, Առարկա, Հաբաթական ժամերի քանակ (X, XI, XII), and rows for subjects like Մաթեմատիկա, Ֆիզիկա, Բնագիտական առարկա, etc.

Աղյուսակ 3

ԱՎԱԳ ԴԴՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱՐԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԼԱՆ

X-XII դասարաններ

Table with 4 columns: Առարկայախումբ, Առարկա, Հաբաթական ժամերի քանակ (X, XI, XII), and rows for subjects like Մաթեմատիկա, Ֆիզիկա, Բնագիտական առարկա, etc.

6

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին:

գ. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 19-րդ կետի համաձայն «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով:

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը:

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հավելվածի Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով:

7) Սույն հավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախաձեռնագիտական ուսումնական ծրագրերը:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. Մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը:

բ. Ուսումնական պլանով 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 20-րդ կետով սահմանված կարգով՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի): 9) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

10) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմությունը» լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում:

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն Աղյուսակ 7-ի)՝ և տնային ու հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (համաձայն Աղյուսակ 8-ի):

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն») առարկաների) համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի (Մայրենի) ուսուցմանը,

բ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժօգնականի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ,

գ. Տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը,

դ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. Հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժաստատությունը սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն Աղյուսակ 7-ի):

ՈՒՍՊԼԱՆ

5

Table with 5 columns: Category, Sub-category, and three numerical values. Includes rows for 'Ընդհանուր հանրակրթական առարկաներ' and 'Ընդամենը'.

ԱՎԱԳ ԳՊՐՈՅԻ ԱՐԶԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ X-XII դասարաններ

Table with 5 columns: Category, Sub-category, and three numerical values. Includes rows for 'Մասնագիտական դասընթացներ' and 'Ընդհանուր հանրակրթական առարկաներ'.

Աղյուսակ 5

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԻՄԵՆԻ ԽՈՐԱՎՎԱԾ ՈՒՍՈՒՅՄԱՐ I - IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Table with 10 columns: Subject, and nine numerical values (I-IX). Includes rows for 'Մայրենի', 'Հայոց լեզու', 'Ֆիզիկա', 'Մաթեմատիկա', 'Ընդամենը'.

Աղյուսակ 6

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ (ԴԱՍԱՐԱՆԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Table with 13 columns: Subject, and twelve numerical values (I-XII). Includes rows for 'Ռուսաց լեզու', 'Մայրենի', 'Հայոց լեզու', 'Ֆիզիկա', 'Մաթեմատիկա', 'Ընդամենը'.

Աղյուսակ 7

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵՒՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Table with 13 columns: Subject, and twelve numerical values (I-XII). Includes rows for 'Մայրենի', 'Հայոց լեզու և գրակ.', 'Ռուսաց լեզու', 'Օտար լեզու', 'Ես և շրջակա աշխարհը', 'Մաթեմատիկա', 'Ֆիզիկա', 'Մաթեմատիկա', 'Ընդամենը'.

Աղյուսակ 8

ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԳՍՓԱՎՈՐ ԵՎ ԾԱՆՐ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՌԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԵՒՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Table with 9 columns: Subject, and eight numerical values (I-VIII). Includes rows for 'Լեզու և ընթերցանություն', 'Մաթեմատիկա', 'Տես և շրջակա աշխարհը', 'Ֆիզիկա', 'Մաթեմատիկա', 'Ընդամենը'.

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴՊՐՈՑ-ՃԱՄԲԱՐ

ԺԱՄԱՆԱԿԻ ՇԵՏ ՆՐԱ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՉՐ ԵՆ ՇՆՉՈՒՄ

Մարտակերտի շրջանի Ծանկահող գյուղն ակամավոր գիտնական ու մեծ հայրենասեր, ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի ծննդավայրն է: Նա ոչ միայն 20-րդ դարի ծնունդ է, այլև 20-րդ դարը կերտողներից էր: Հայ ճարտարագետն ու գյուտարարն էլեկտրամեխանիկայի խորհրդային դպրոցի, խորհրդային հրթիռաշինության և տիեզերագնացության նախահայրերից էր: Նա իրականացրել է սոցիալիստական առաջին երկրի էլեկտրաֆիկացումը, մասնակցել տիեզերքի նվաճմանը: Ռազմական և տիեզերագնացության գլխավոր կոնստրուկտորներից մեկն էր: Խորհրդային առաջին տիեզերանավերն ամբողջությամբ հագեցած էին Իոսիֆյանի ստեղծած էլեկտրասարքավորումներով: Մասնագետները նրա անունը դասում են Կուրչատովի, Կորոլյովի, Կելդիշի կողքին: Ժամանակին նրա մասին գրեթե չէր խոսվում՝ կապված նրա գործունեության հույժ գաղտնիության հետ: Լենինի քառակի, Աշխատանքային կարմիր դրոշի և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանակիր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր. սրանք խորհրդային բոլոր պարգևները չեն մեր մեծ հայրենակցի կենդանության օրոք:



Նրա շնորհիվ արցախյան այս փոքրիկ գյուղ էին այցելել աշխարհահռչակ գիտնականներ Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Մերգելյանը... Աստղային մեծության զավակի շնորհիվ կոլտնտեսությունն էլ կրում էր աստղային անուն՝ առաջին կին տիեզերագնաց Վալենտինա Տերեշկովայի անունը:

100 տարի անց՝ 2015-ին, երբ մշվում էր մեր մեծ հայրենակցի ծննդյան մեկնարկային հոբելյանը, արցախյան փոքրիկ այս գյուղ էր բերել Մոսկվայից նրա անունը կրող գիտահետազոտական ինստիտուտի գիտնականներին: Այդ ժամանակ էլ Ծանկահողի Ա. Իոսիֆյանի անվան դպրոցի բակում կանգնեցվեց գիտնականի կիսանդրին:

Անդրանիկ Իոսիֆյան գիտնականի, գյուտարարի, ճարտարագետի, քաղաքացու, իր բնօրրանին նվիրված մարդու կերպարը հպարտություն է առաջացնում յուրաքանչյուր հայի, առանձնապես՝ արցախցու մեջ:

Մեծ գիտնականն ամուր թելերով կապված էր ծննդավայրի հետ, ամառները արձակուրդն անց էր կացնում հայրենի գյուղում, շփվում գյուղացիների հետ, մասնակցում խոտհարքին, խորհուրդներ տալիս, օգնում գյուղին:

Այսօր Ա. Իոսիֆյանի ծննդավայրը բանուկ են պահում համապետականները և այստեղ ստեղծված բնագիտական կիրակնօրյա դպրոցը, ու ամեն ամառ նրա ծննդյան օրը՝ հուլիսի 21-ին

բացվող դպրոց-ճամբարը, ինչի կապակցությամբ տեղի է ունենում հանդիսավոր միջոցառում մեծ գիտնականի պատվին:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հովանու ներքո ամառային դպրոց-

ճամբար բերելու հիմնական նպատակներից մեկը հենց դա է. նախ, որ զգան Իոսիֆյանի ոգին, երկրորդ՝ ընտրեն այնպիսի ուղղություններ, որոնցով լավագույն ապագա ստեղծեն իրենց և մեր երկրի համար»,- ասաց նա և մտաբեց աշակերտներին «տառապել» միշտ առաջադեմ գաղափարներով:

Ճամբարի բացմանը ներկա՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Ն. Աղաբալյանը հորդորեց երեխաներին ճանաչել մեր մեծերին և հասկանալ, որ իրենք էլ այդ նույն գեների կրողներն են, ու դրանք կարթնանան նրանց մեջ, եթե յուրաքանչյուրն իր առջև նպատակ դնի և հետևողական աշխատանք տանի գիտելիքնե-

տիսյանը, ուսանողներ, ֆիզմաթ դպրոցների բարձր դասարանցիներ, մասնագետներ Արցախից:

Ս. Ավետիսյանը՝ ճամբարի շարժիչ ուժը, որ Ա. Իոսիֆյանի քրոջ աղջիկն է, իր գիտնականությունը հայտնեց մասնակիցների և դասավանդողների խմբերին: «Գլխավոր դերն այս դպրոցի ոչ միայն այն է, որ երեխաների մեջ սեր արթնացնենք դեպի բնագիտամաթեմատիկական առարկաները, այլև, որ նրանք հասկանան, թե դեպի որ ուղղությամբ պետք է գնան: Եփուներն ուսանողների, երևանի լավագույն դպրոցների ներկայացուցիչների հետ հնարավորություն են տալիս նրանց ճիշտ կողմնորոշվել»,- ասաց նա: Ի դեպ, Կանք գյուղից կիրակնօրյա դպրոց և հինգ տարի ճամբար հաճախած այս տարվա շրջանավարտներից Մարիամ Ղալայանն ընդունվել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի բաժին: Գնաճարակալ Լիլիթ Առաքելյանը հաջորդ տարի է նույն ճանապարհով գնալու:

Ս. Ավետիսյանը շուրջ երկու տասնամյակ հատուկ դասընթացներ է վարում ԱրՊՀ-ում: Արցախում ծրագրավորման գործընթացի հիմնադիր, ԱրՊՀ պրոռեկտոր և այս ճամբարի ակտիվ նախաձեռնողներից Գեորգի Սահակյանը տեղեկացրեց, որ համալսարանի գիտխորհուրդը որոշում է կայացրել Սվետլանա Ավետիսյանին ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու մասին՝ Ծանկահողի կիրակնօրյա դպրոցի և ճամբարի ու համալսարանի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի զարգացման գործում ունեցած ավանդի համար և նրան հանձ-



ճամբարն այստեղ գործում է 2014 թվականից, իսկ տարվա ընթացքում՝ կիրակնօրյա դպրոց, ուր հաճախում են ենթաշրջանի դպրոցների բնագիտամաթեմատիկական հակումով երեխաները, որոնց հետ պարապմունքներ են անցկացնում ԱրՊՀ մասնագետները: Ծրագրի նպատակն է զարգացնել աշակերտների հետաքրքրությունը բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ, նրանց տալ մաթեմատիկական և ծրագրավորման բազային գիտելիքներ, ի հայտ բերել հեռանկարային աշակերտներին, նրանց ծանոթացնել արցախցի մեծ գիտնականների հայտնագործություններին, կողմնորոշել դեպի գիտական ուղղություններ:

Ճամբարին մասնակցում են Ծանկահողի կիրակնօրյա դպրոցի և հարցազրույցի արդյունքներով ընտրված՝ ենթաշրջանի դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտներ՝ ընդհանուր 70 հոգի:

Բնական է, որ Ծանկահողում բնագիտական ամառային դպրոց-ճամբարի բացման արարողությունն էլ պետք է սկսվեր նրա հանձնարող զավակի մասին զրույցով, որն էլ ներկայացրեց Արցախի պետական համալսարանի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ճամբարի ստեղծման ջանադով Կարեն Արամյանը: «Անդրանիկ Իոսիֆյանին երախտապարտ լինելու դրսևորումը պիտի լինի Արցախում բնագիտամաթեմատիկական ուղղության զարգացումը: Երեխաներին

րի յուրացման ուղղությամբ, ճանաչելի դառնալ ոչ միայն հայրենիքում, այլև աշխարհում: Նրանց մտաբեց բնության այդ հիասքանչ անկյունում հաճելի հանգիստը գուցարդել նոր գիտելիքներով զինվելու հետ և իրենց հետագա մասնագիտության համար կողմնորոշվել դեպի այդ ուղղությունները:

Շրջանի ղեկավարության անունից մասնակիցներին ողջունեց և ճամբարի ճանաչողական, ուսուցողական, դաստիարակչական առաքելությունը կարևորեց Մարտակերտի շրջավարդակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Դավիթ Լալայանը:

Ճամբարում դասընթացներ են վարում ԵՊՀ ծրագրավորման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Ավե-

նեց վկայականը:

Ճամբարականներին ծրագիրը մատուցվում է դասախոսությունների, թեմատիկ բանավեճերի, դասընթացների, խաղերի, մրցույթների միջոցով: Նրանց համար կազմակերպվելու են նաև արշավներ դեպի Արցախի պատմամշակութային վայրեր, այցեր բանգարաններ, նախատեսված է մարզաձևակութային ժամանց:

Մարդու կյանքը վերջավոր է, բայց նրա հոգին, միտքը, կատարած գործն անմահ են: Արցախի մեծ զավակ Անդրանիկ Իոսիֆյանի կենդանի հոգին սավառնում է հայրենի եզերքի երկնականմարում՝ կենսալիցքերով կենսարար դաշտ ստեղծելով բարի պտուղների համար:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Դպրոցների ապագան մշուշոտ է: Հատկապես բարձր դասարաններում սովորող աշակերտների մեծ մասը դժվամոթյամբ է դպրոց գնում: Ծնողները դժվարությամբ են կողմնորոշվում, թե որ դպրոց ուղարկեն իրենց երեխաներին: Տնօրեններին, ուսուցիչներին մտահոգում է աշակերտների զգալի մասի անտարբեր վերաբերմունքն ուսման նկատմամբ:

Ներկայումս ողջ աշխարհում քննարկվում է դպրոցների ապագայի հարցը: Եվ այդ քննարկումներում գերակշռում է այն տեսակետը, որ դպրոցներում արմատական փոփոխություններ են պետք: Դպրոցի ներկա մոդելը հիմնվում է այն մոտեցման վրա, որ միակ տեղը, որտեղ աշակերտները կարող են նոր բան սովորել, դպրոցն է: Հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ կա ինտերնետ, հեռուստացույց, գրադարան, հեռախոսի և սոցիալական ցանցերի միջոցով իրականացվող ինտենսիվ շփում երեխաների միջև:

Գիտնականները հաշվարկել են, որ աշակերտները դպրոցում անցկացնում են ժամանակի 15-20%-ը: Ուրեմն՝ դպրոցը հաջողությամբ բարեփոխելու համար պետք է հասկանանք, թե ինչպես է անցնում երեխայի կյանքը դպրոցից դուրս: Այս իրողությունը միշտ անտեսվել է: Մեզ թվում է, թե 20-րդ և 21-րդ դարի երեխաները դպրոց են գալիս նույն իրականությունից: Բայց այդպես չէ: Ի տարբերություն 20-րդ դարի երեխաների, այսօրվա երեխաները շատ զբաղված են: Նրանք հսկայական ժամանակ են ծախսում համակարգչային խաղերի, սոցիալական ցանցերի, հեռուստատեսության վրա: YouTube-ով դիտում են տարբեր տեսանյութեր, սոցիալական ցանցերի միջոցով տեղեկանում լրահոսին, տարբեր ծրագրերի մի-

ջոցով հաղորդակցվում են հեռախոսով:

Եթե սրան գումարենք այն հանգամանքը, որ նախորդ սերնդի երեխաների նման այսօրվա երեխաներն էլ են հաճախում տարբեր խմբակներ, գյուղատնտեսական աշխատանքներ կատարում, երբեմն խաղում բակում, շփվում ընկերների, հարազատների հետ, ապա պարզ կդառնա, թե որքան բազմազան է այսօրվա երեխայի ապրելակերպը, և որքան շատ են երեխաների վրա ազդող աղբյուրները, ու որքան քիչ ժամանակ է մնում դպրոցի ու դասերի համար:

Փաստացի պետք է արձանագրենք, որ այսօր դպրոցական կրթությունն ունի մրցակիցներ, որոնք օգտագործում են երեխաներին գրավելու ավելի արդյունավետ գործիքներ, քան դպրոցը: Նման իրավիճակում անհիմաստ է ինտեգրացիոն շարունակել դպրոցական կրթության հին մոդելը:

Այն բարեփոխումները, որոնք իրականացվում են Հայաստանի հանրակրթության ոլորտում, կոսմետիկ են և չեն կարող փոխել ինն մոդելը: Ամենկին կարևոր չէ՝ Հայաստանում կլինի 11-ամյա, թե՛ 12-ամյա համրակրթություն, կօգտագործվի գնահատման 5 միավորանոց, թե՛ 10 միավորանոց համակարգ, դասագրքում կլինի 30 դա՞ս, թե՛ 35 դաս, 10 առարկա՞ կսովորեն, թե՛ 15: Գլխավոր խնդիրն այն է, որ ուսուցման կազմակերպման ձևերը համարժեք չեն այսօրվա աշխարհին և երեխաների ապրելակերպին:

Ներկայացնենք նոր դպրոց կառուցելու երեք կարևոր հենասյուն:

Դանիսի կրթության օրենքում այսպիսի ձևակերպում կա. «Դպրոցի նպատակը երեխային գործել սովորեցնելն է»: Այս միտքը շատ կարևոր է և պետք է դրվի նոր դպրոցի հիմքում: Խնդիրն այն է, որ պարզապես տե-

սական կրթությունը, որտեղ երեխաներն ընդամենը վերարտադրում են դասագրքի հեղինակի և ուսուցչի մտքերը, ծանծրալի է: Այսօրվա երեխաները սիրում են գործել:

Մի ամիթով գրել է, որ երիտասարդությունը գնաց Նիկոլ Փաշինյանի հետևից, որովհետև նա իր կարծ ելույթներից հետո մարդկանց առաջարկեց գործողություններ անել:

Ի դեպ, նույն տրամաբանությամբ կառուցված են համակարգչային խաղերն ու ծրագրերը: Դրանք երեխաներին դուր են գալիս, քանի որ մղում են գործողություններին: Համակարգչային խաղի ժամանակ երեխան հիմնական գործող անձն է: Իսկ դպրոցում երեխաների մեծ մասը չի գզում դասավանդվող նյութի և իր առնչությունը: Արդյունքում՝ երեխաներն օտարվում են դասապրոցեսից:

Ուրեմն, առաջին փոփոխությունը պետք է լինի տեսականի և գործնականի կապակցումը: Հենց այդպիսին պիտի լինի կրթության նոր բովանդակությունը:

Նոր դպրոցի մյուս հենասյունը պետք է լինեն ուսուցիչները: Ավանդական դպրոցում ուսուցիչը գիտելիք փոխանցող է, բացատրող, ստուգող և վերահսկող: Նախկինում այս ամենը կարևոր էր: Գիտելիքի դեֆիցիտ կար, և ուսուցիչը պետք է փոխանցեր ու բացատրեր: Այդ գործառնություն իրականացնելու համար ուսուցչին պետք էր դասարանում ապահովել լռություն և վերահսկողություն:

Այսօր գիտելիքն ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ ու հնարավորություններ: Հետևաբար՝ դպրոցը գիտելիք փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ,

ապա ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա երեխայից սովորելու, երեխային լսելու, հասկանալու հմտություններ:

Այս խնդրի լուծումը շատ դժվար է, որովհետև հետաքրքիր լինելու համար ուսուցիչները պետք է շատ զրբեր կարդան, բազմազան հետաքրքրություններ ունենան, մուլտֆիլմեր ու մանկական ֆիլմեր դիտեն, ունենան մարդկային որակներ: Իսկ այդ ամենը ժամանակ ու ռեսուրսներ են պահանջում: 50-60 հազար դրամ աշխատավարձ ստացող ուսուցիչը ստիպված է կրկնուսույց աշխատել, գյուղատնտեսությանը կամ այլ աշխատանքով զբաղվել: Բայց կան ուսուցիչներ, որոնք կարող են բավարարել այս պահանջը:

Պետք է բացահայտել նրանց և խրախուսել, որպեսզի մյուսներն էլ փորձեն նրանց հետևից գնալ: Ուսուցչի նոր մոդելը պետք է լինի նաև մանկավարժական կրթության հիմքում:

Պետք է փոխվի նաև կրթության կառավարիչների աշխատանքը: Կաբինետում հանդիպումներ անցկացնող, ռազմավարություններ ու ծրագրեր գրող, շրջաբերականներ իջեցնող պաշտոնյաներին պետք է փոխարինեն ուսումնական հաստատություններ այցելող, երեխաների ու մանկավարժների հետ զրուցող, նրանց ոգևորող, օրինակ ցույց տվող կառավարիչները:

Եթե նախարարությունը և մնացած կառույցները չլինեն փոփոխությունների օրինակ, դպրոցներում ոչինչ չի փոխվի: Իսկ դպրոցները պետք է փոխվեն, եթե ուզում են մնալ որպես սոցիալական ինստիտուտ:

**ՍԵՐՈՔ ԽԱՀԱՏՐՅԱՆ
Կրթության փորձագետ
168.am**

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐՏԱՐԿԵՆՍ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԵՐ



«Լուսարար»-ի մարզական էջը այս անգամ հյուրընկալեց յուրահատուկ անձնավորության, որի հետ կայացած քերթ գրույցը վերահանեց մարտարվեստի ու հավատքի հետ կապված հարցեր ու պատասխաններ: Մեր գրուցակիցը քունգֆուի մարզիչ Արմեն ՍՈՒՔԻԱՅԱՆՆ է, որը ներկայումս պարապում է Շուշի քաղաքում, ծառայում է Սուրբ Դավիթ Սկրտիչ եկեղեցում (Կանաչ ժամ)՝ որպես սպասավոր եւ միաժամանակ վերապատրաստման դասընթացում է անցնում Արցախի վիճառում եւ թայջիի ֆեդերացիայի մարզիչի ֆեդերացիայի մարզիչ Սայաթ Բաղդասարյանի մոտ: Թե ինչպես սկսվեց Արմեն Սուրբի-ասյանի մարզական եւ հոգեւոր ուղին, եւ թե ինչ ընդհանրություն կա մարտարվեստի եւ քրիստոնյա հավատքի միջեւ՝ պարզաբանեցինք գրույցի ընթացքում:

Արմեն, ինչպե՞ս ստացվեց համարել մարտարվեստի պարապմունքները եւ եկեղեցում ծառայելը:

Մանկուց երազում էի մարտարվեստներ պարապել: Հանգամանքների բերումով մանկությունս ՌԴ գյուղերից մեկում է անցել, որտեղ երազանքս իրականացնելու հնարավորություն չկար: 2006-ին եկա Արցախ, նշեմ, որ մայրս արցախցի է, եւ շարունակեցի դպրոցական կրթությունս Շուշիում: Դասընկերներիցս իմաց կա, որ Շուշիում քունգֆուի խմբակ կա, ուրախացա եւ սկսեցի ես էլ նրանց հետ պարապմունքների հաճախել: Մարտարվեստի առաջին ուսուցիչս մարզիչ Մանվել Հակոբյանն էր՝ Սուրբ Դավիթանես Սկրտիչ եկեղեցում կից գործող մարտարվեստի խմբակի մարզիչ եւ եկեղեցու հոգեւոր առաջնորդ Սեր Մեսրոպ Սկրտչյանի ավագ աշակերտներից մեկը: Շուտով Մանվել Հակոբյանը տեղափոխվեց, իսկ մեր պարապմունքները հանձն առավ անցկացնել Սեր Մեսրոպը: Որոշ ժամանակ պարապում էինք եկեղեցու տարածքում՝ համադրելով մարտարվեստի դասերը հոգեւոր գրույցների հետ: Մի անգամ էլ Սեր Մեսրոպը առաջարկեց եկեղեցական հատուկ շապիկներ հագնել եւ ծառայել եկեղեցում: Ընդունելով առաջարկը՝ սկսեցի համագործակցությունս եկեղեցու հետ: Այդ ընթացքում պարապմունքներ ունեցանք նաեւ Դավիթ Դավթյանի գլխավորությամբ: Սեր Մեսրոպը դարձրեց էր մարտարվեստի դասերն անձամբ վարելը: Պարապելով՝ դարձա խմբի ավագ, սկսեցի ինքս մարզելու փորձեր կատարել տարբեր մարզիկների հետ: 2015-ին կրկին մեկնեցի ՌԴ երկու տարով: Արցախը շատ էր ձգում ինձ: Վերադարձա 2017-ին եւ տեսա, որ խումբը ցրվել էր. մարզիչների պակաս կար: Հավաքեցի իմ եւ մոր մարզիկներից բաղկացած խումբ եւ պարապմունքներ սկսեցի: Պարապմունքներս կրում էին խառը մարտարվեստների բնույթ, քանի որ ինքս հստակ չէի կողմնորոշվել, թե քունգֆուի բազմազան ոճերից որին ընթացք տայի: Ինքնագրագամբ էի զբաղվում, օգտվում համացանցից: Աշակերտներին մատուցում էի այնպիսի հնարներ, որոնք, իմ կար-

ծիքով, ավելի արդյունավետ են կիրառվում իրական ինքնապաշտպանության ժամանակ: Սեր Մեսրոպի խորհրդով դիմեցի Արցախի վիճառում եւ թայջիի ֆեդերացիայի մախագահ եւ գլխավոր մարզիչ Սայաթ Բաղդասարյանին վերապատրաստման դասընթացներ անցնելու նպատակով: Նրա մոտ 2018թ.-ից սկսեցի ուսումնասիրել եւ մարզվել վիճառում ոճով՝ միաժամանակ մարզվելով այդ ոճով իմ աշակերտներին Շուշիում: Առ այսօր համարում եմ մարզչական գործս ու վերապատրաստվելս եկեղեցում ծառայելու հետ:

Ի՞նչ ընդհանրություն կա մարտարվեստների եւ հավատքի միջեւ:

Մարտարվեստներ ասելով մենք չենք հասկանում միայն ֆիզիկական պատրաստություն: Մարտարվեստներում, ինչպես եւ քրիստոնյա հավատքի տեր մարդկանց համար գոյություն ունի երեք հասկացություն՝ հոգի, միտք եւ մարմին, որոնք պետք է զարգացնել միասին: Ընդ որում, վերադասը հոգին է: Ֆիզիկական մարզումները, սպորտը եւ մարտարվեստները ողջունվում են քրիստոնեական հավատքի տեսակետից, ուղղակի միայն ֆիզիկական կատարելագործումը մարդուն շատ բան չի տալիս. ֆիզիկական ժամանակավոր է, իսկ հոգեւորը՝ հավերժ: Ուստի եւ մարտարվեստի սկզբունքներն ու քրիստոնեական հավատքն ունեն մեծ ընդհանրություն՝ կատարելագործել մարմինն ու հոգին՝ առաջնությունը տալով հոգուն:

Արեւելյան մարտարվեստները, որոնց հիմքում ընկած են արեւելյան կրոններ եւ ուսմունքներ, արդյոք չեն աղավաղում մարզիկների քրիստոնեության մասին ունեցած պատկերացումները:

Մեր պարապմունքները չեն եզրափակվում միայն հնարներ, հարվածներ կամ պաշտպանություն մատուցելով: Շատ կարեւոր է մարզիչ պատրաստությունը մարզիկներ դաստիարակելու եւ կոփելու գործում: Հաշվի առնելով մեր երկրի դրությունը՝ մենք պարտավորվում ենք ազգի պաշտպաններ դաստիարակել: Պարապմունքների ընթացքում տարվող դաստիարակչական գրույցների ժամանակ մարզիկներին

բացատրում ենք, թե ինչ նպատակ ունի մարտարվեստով պարապելը: Մեր օրհասական խնդիրը հայրենիքի պաշտպանությունն է, որը սուրբ գործ է, ուրեմն՝ քունգֆուն ծառայեցնում ենք այդ նպատակին: Մարզիկները դառնում են կարգապահ, ուժեղ՝ ֆիզիկապես եւ հոգեպես: Իսկ խորը մեղիտացիաները, արարողակարգերը, որոնք բնորոշ չեն մեր հավատքին, բայց կիրառվում են արելյան կրոններում, մենք պարզապես չենք կատարում: Այսինքն՝ վերցնում եւ փոխանցում ենք այն, ինչ մեզ պետք է:

Ձեր տեսակետով ողջունե՞ի՞ք է մարզիչների կողմից մարզիկների մեջ ազդեցիկ ծեսավորելը, որը վառ երեւում է նաեւ ռիմուս մարզիկները մրցելու ժամանակ՝ նրանց մարզիչների քաջալերող կանչերով, «խփի՛ր, ծծի՛ր, սպանի՛ր»:

Ամեն ինչ կախված է այն սահմանի գիտակցումից, թե որտեղ պետք է ուժ կիրառել, իսկ որտեղ հաղթել բարոյապես՝ հանգստությամբ, խաղաղությամբ: Հնարավոր է, որ այդ սահմանը դեռեւս գիտակցված չէ տվյալ մարզիկների ու մարզիչների մոտ: Կոնկրետ մեր դեպքում մեր սաների մոտ ազդեցիկ վերափոխվում է հոգու հանգստության, այսինքն՝ մարտարվեստների պարապմունքները՝ համադրված հոգեւոր գրույցների հետ, խաղաղեցնում են մարդուն: Հայտնի ասացվածք կա, որը մեզ է փոխանցվել մարտարվեստների լավագույն վարպետներից. «Լավագույն մարտն այն է, որը չի կայացել»: Հոգու հանգստության եւ խաղաղության վիճակի հասնելով՝ վարպետների այս պատգամը գիտակցվում է, եւ հնարավոր է դառնում խուսափել ֆիզիկական բախումներից: Բայց դա չի նշանակում, թե թշնամին հարձակվելու դեպքում դիմադրել պետք չէ: Մինչդեռ հավասարակշռված, ինքնավերահսկող, հանգիստ եւ ներդաշնակ վիճակում գտնվող մարզիկը, մարտիկը, զինվորն ավելի շատ հնարավորություն ունի հաղթելու:

Ինչպե՞ս մարզել ոգին:

Ոգին մարզելու համար մենք հիմք ենք վերցնում մեր ազգի հերոսների, նրանց հաղթանակների փայլուն օրինակները, որոնցով ոգեւորվում ենք մենք եւ մեր սերունդները: Պետք է նաեւ նշել, որ ուժեղ ոգու աղբյուր են հավատքը եւ վստահությունը Աստծուն: Հավատացյալ մարդը ինչի՞ն է հավատում. նրան, որ աշխարհիկ կյանքը ժամանակավոր է, որին հաջորդում է հավերժ կյանքը: Ուրեմն չպետք է կաշեկնք աշխարհիկ կյանքից, վախ ունենանք այս կյանքի դժվարություններից, մահից: Հետեւապես, ոչինչ չի կարող կտրել մարդու ոգին, եթե կա հավատ հավիտենական կյանքի հանդեպ, եւ եթե մարդն ապրում է այդ հավատով ու ձգտում է այդ կյանքին Աստծո հետ: Այն մարդկանց, ովքեր ընկճված են, հոգեպես թույլ, ոգին կոփելու կարիք ունեն, խորհուրդ է տրվում հոգեւոր կյանք սկսել, ընթերցել հոգեւոր գրքեր, հաճախել եկեղեցի, եւ ինչու չէ, պարապել մարտարվեստներ:

ԱՄԵՐՏՈ ՔՐԵՅՆԸ ՄԵՄԻՆԱՐ ՎԱՐԵՅ ԱՐՃԱՆՈՒՄ



Սեմինար-մարզումները կարևոր դեր ունեն ինչպես մարզիկի, այնպես էլ մարզածների զարգացման համար: Արցախում մոր զարգացող մարզածներին ընթացք տալը շրջադարձային նշանակություն ունի, քանի որ դա նպաստում է միջազգային կամ աշխարհի առաջնություններում մեր մարզիկների արժանապատիվ հանդես գալուն: Ջիու-ջիջու եւ գրապլինգ մարզածներն Արցախում մոր են սկսել զարգանալ՝ խառը մենամարտեր (MMA), մուայթայ, կա-1, քիքբոքս մարզածներին զուգահեռ՝ մարտարվեստների ասոցիացիայի ներքո: Ասոցիացիան, համագործակցելով ՀՀ-ում գործող այս մարզածների ֆեդերացիաների հետ, սպորտի զարգացման ուղղված ծրագրեր է իրականացնում, որի հերթական ցայտուն իրադարձությունը Արցախում երկօրյա սեմինար-մարզումներ անցկացնելու նպատակով մենամարտերի համաշխարհային ասոցիացիայի մարզիկների կազմակերպությունն էր:

Վլերտո Քրեյնը (ծնվել է 1976թ.) խառը մենամարտերի (MMA) ամերիկացի հմուտ մարզիկ եւ մարզիչ է: Համաշխարհային «Ուլտիմեյթ» (UFC) կազմակերպության առաջնությունում հաղթողի կոչման է արժանացել՝ ձեռք բերելով համաշխարհային հռչակ: Մարզումներ է վարում հիմնականում ջիու-ջիջու, գրապլինգ, խառը մենամարտեր մարզածներով, որոնցում հասել է մեծ վարպետության:

Հուլիսի 13-15-ը Վլերտո Քրեյնը Արցախում էր: Երկօրյա այցի ընթացքում նա հասցրեց եւ հազեցած սեմինար-մարզումներ անցկացնել Արցախի խառը մենամարտերի մարզիկների հետ, եւ այցելել Արցախի տեսարժան վայրեր: Ժամանելով ՀՀ՝ ջիու-ջիջուի եւ գրապլինգի ֆեդերացիայի առաջարկով Վլերտո Քրեյնը ցանկացավ նաեւ Արցախում լինել: Իր հետ ունեցած հարցազրույցում նշեց, որ շատ հավանեց Արցախը, հատկապես տավրոված էր մարզիկների մարզական լավ վիճակով եւ մարզիչների վառ երեւացող աշխատանքով: Սեմինարի ընթացքում մարզիկներին փոխանցեց հիմնականում ջիու-ջիջուի տեխնիկական հնարներ, որոնք մարտի ժամանակ կիրառելով՝ մարզիկն ավելի հեշտ կարող է հաղթանակի հասնել: Օգտագործելով ձեռքի հնարներ, որոնք նույնպես ցուցադրվեցին սեմինարի ժամանակ, մարզիկը կարող է դուրս գալ «պարտեր» կոչվող վիճակից եւ մարտում հաղթել: Աստիություն եւ հետաքրքրասիրություն ցուցաբերած մարզիկների բոլոր հարցերին Վլերտո Քրեյնը սիրով պատասխանեց:

Սեմինարին ներկա՝ ԱՀ ԿԳՍՍ սպորտի վարչության պետ Աշոտ Դանիելյանը կարեւորեց սեմինար-մարզումների վարումն Արցախում հատկապես մոր զարգացող մարզածներից՝ առանձնապես, որ սպորտում բարձր մակարդակի հասած մարզիկների ու մարզիչների, որպիսին Վլերտո Քրեյնն է, այցն ու փորձի փոխանակումը ոգեւորում եւ ավելի շատ հնարավորություն են տալիս մարզիկներին, որ նրանք էլ ձգտեն եւ հասնեն բարձունքների:

Հունիսի 29-ից հուլիսի 8-ը Չեխիայի մայրաքաղաք Պրահայում կայացած Մուայթայի եվրոպայի առաջնությունում ասոցիացիայի ներքո գործող մուայթայի ֆեդերացիայի սաները մրցանակային տեղեր են զբաղեցրել: Առաջնությանը մասնակցում էր 33 պետություն: ՀՀ կազմի ներքո առաջնությանը մասնակցում էր մեկնել արցախցի 3 մարզիկ՝ Արցախի մուայթայի հավաքականի մարզիչ Ալեքսան Աղաբալյանի գլխավորությամբ: 16-17 տարեկանների խմբում պայքարող Անտոնիո Քոչարյանը (57 կգ) մրցանակային տեղ չունեցավ, իսկ Ռազմիկ Գրիգորյանը (60 կգ), Արման Գալստյանը (63,5 կգ) զբաղեցրին 3-րդ տեղեր: Մարզիչ Ալեքսան Աղաբալյանը առանձնապես կարգաւորված Գալստյանի ելույթը մենամարտերում՝ ասելով, որ առաջին մենամարտը թուրք մրցակցի հետ էր, որում Արմանը փայլուն հաղթանակ տարավ, երկրորդ մենամարտում հաղթեց լիտվացի մրցակցին, բայց երրորդում զիջեց հունգարացի մրցակցին, այդպիսով զբաղեցրեց 3-րդ տեղ եվրոպայի առաջնությունում: Մարզիչ գնահատմամբ՝ այս արդյունքը դրական է, բայց եւ փորձի պակասություն կա մարզիկների մոտ, որի լրացման համար անհրաժեշտ պայմաններից է սեմինար-հավաքների հաճախակի կազմակերպումը:

Հուլիսին, որ սպորտի աշխարհառօնյալ հեղինակությունների այցն Արցախ ու սեմինար-մարզումների կազմակերպումը հաճախակի կլինեն, իսկ մեր մարզիկների հաղթանակները շարունակական բնույթ կկրեն:

Սոնյա ՎԱԿԱՅԱՆ

Advertisement for LUSARAR (ԼՈՒՍԱՐԱՐ) featuring contact information, address (3. Թումանյան փ. 95, 94-38-99), and website (www.lusarar.info).

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: